Մրցույթին Մասնակցելու Հրավեր (ՄՄՀ)

Ամսաթիվ՝ 28.12.2020թ.

Վարկ №: 8495 - AM (Էլեկտրահաղորդման Ցանցի Բարելավում Ծրագիր)
Վարկ №: 8388-AM (Էլեկտրամատակարարման Հուսալիություն Ծրագրի Լրացուցիչ Ֆինանսավորում Ծրագիր)

ՄՄՀ №: HVEN-DSI-1/2020

1. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից ստացել է վարկ **«Էլեկտրահաղորդման Ցանցի Բարելավում Ծրագրի» և «Էլեկտրամատակարարման Հուսալիություն Ծրագրի Լրացուցիչ Ֆինանսավորում Ծրագրի»** ծախսերի համար: Նախատեսված է, որ այս վարկերի միջոցների մի մասը տրամադրվելու է հետևյալ պայմանագրերի (Լոտերի) համար՝

Լոտ 1. «Արարատ-2» 220/110/6 կՎ ենթակայանի վերակառուցում (**Վարկ №: 8495 – AM)**
Լոտ 2. «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում (**Վարկ №: 8388-AM)**

2. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, որպես Ծրագիրը իրականացնող ընկերություն, այժմ հայտեր է հրավիրում իրավասու հայտատուներից հետևյալ ենթակայանների վերակառուցման և շահագործման հանձնման համար՝

Լոտ 1. «Արարատ-2» 220/110/6 կՎ ենթակայանի վերակառուցում
Լոտ 2. «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում

3. Հետաքրքրված իրավասու հայտատուները կարող են հետագա տեղեկություններ ստանալ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային օրերին՝ ստորև նշված հասցեներով տեղական ժամանակով ժամը 9^{00}-ից մինչև 17^{30}:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Զորավար Անդրանիկի փող.1 Երևան 0084, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. + 374 60 38 00 14
Էլեկտրոնային հասցեներ.
hven@hven.am, subrec@hven.am, tigran.sahradyan@hven.am

4. **Հայտատուն պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին յուրաքանչյուր լոտի համար** ՝

Լոտ 1- «Արարատ-2» 220/110/6 կՎ ենթակայանի վերակառուցում

- **Ընդհանուր Փորձառություն**

Ենթակայանների վերականգնման / կառուցման / վերակառուցման պայմանագրերի իրականացման փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ

ղեկավարող կապալառու՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և յուրաքանչյուր տարվա ընթացքում առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

- **Հատուկ Փորձառություն**
  - Վերջին տաս (10) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների վերականգնման / կառուցման / վերակառուցման պայմանագրերում մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ ղեկավարող կապալառու: Յուրաքանչյուր պայմանագիրն առնվազն 9,6 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է և համանման է առաջարկվող պայմանագրին (220 կՎ լարումով կամ ավելի բարձր): Առնվազն մեկ (1) պայմանագիր պետք է ավատրված լինի Հայտատուի (ՀՁ-ի համապատասխան անդամի) գրանցման երկրից դուրս:

  - Վերոնշյալ պայմանագրերի համար Կապալառուն պետք է ներկայացնի 220/110/ՄԼ(միջին լարում) կՎ ենթակայանի, ներառյալ կառավարման և պաշտպանության համակարգի նախագծման, մատակարարման, տեղակայման և շահագործման հանձնման փորձ

Պատմական Ֆինանսական գործունեություն - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5] տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

Միջին իրացվելիության գործակից ≥ 1.0

$$\frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}} \geq 1.0$$

Միջին տարեկան շրջանառություն - Նվազագույն միջին տարեկան 9,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

Ֆինանսական ռեսուրսներ - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են իրացվելի ակտիվներ, չգրավադրված իրական ակտիվներ, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ բավարարելու հետևյալ դրամական հոսքերի հետևյալ պահանջներին՝

(i) 4,5 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջը, և

(ii) սույն պայմանագրի և իր ընթացիկ պարտավորությունների համար ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջները**:**

Լոտ 2- «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում

- **Ընդհանուր փորձառություն**

Ենթակայանների վերականգնման / կառուցման / վերակառուցման պայմանագրերի իրականացման փորձ որպես կապալառու, ենթակապալառու կամ ղեկավարող կապալառու՝ մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն առնվազն վերջին հինգ [5] տարիների ընթացքում և յուրաքանչյուր տարվա ընթացքում առնվազն ինն (9) ամիս գործունեությամբ:

- **Հատուկ փորձառություն**

  - Վերջին տաս (10) տարիների ընթացքում առնվազն երկու (2) ենթակայանների վերականգնման / կառուցման / վերակառուցման պայմանագրերում մասնակցություն որպես կապալառու, ենթակապալառու կամ ղեկավարող կապալառու: Յուրաքանչյուր պայմանագիրն առնվազն 6,4 մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, որը հաջողությամբ և նշանակալիորեն ավարտվել է և համանման է առաջարկվող պայմանագրին (220 կՎ լարումով կամ ավելի բարձր): Առնվազն մեկ (1) պայմանագիր պետք է ավատրված լինի Հայտատուի (ՀՁ-ի համապատասխան անդամի) գրանցման երկրից դուրս:
  - Վերոնշյալ պայմանագրերի համար Կապալառուն պետք է ներկայացնի 220/110/ՄԼ(միջին լարում) կՎ ենթակայանի, ներառյալ կառավարման և պաշտպանության համակարգի նախագծման, մատակարարման, տեղակայման և շահագործման հանձնման փորձ

Պատմական ֆինանսական գործունեություն - Ստուգված հաշվապահական հաշվեկշռի ներկայացում կամ եթե չի պահանջվում Հայտատուի երկրի օրենքներով՝ Պատվիրատուի համար ընդունելի այլ ֆինանսական հաշվետվություններ վերջին հինգ [5] տարիների կտրվածքով՝ ցուցադրելու Հայտատուի ֆինանսական դրության ներկա հիմնավորվածությունը և նրա երկարաժամկետ շահութաբերության հեռանկարները:

Միջին իրացվելիության գործակից ≥ 1.0

$$\frac{\text{Ընթացիկ ակտիվներ}}{\text{Ընթացիկ պարտավորություններ}} \geq 1.0$$

Միջին տարեկան շրջանառություն - Նվազագույն միջին տարեկան 6,0 մլն. ԱՄՆ դոլար շրջանառությունը՝ հաշվարկված որպես վերջին հինգ (5) տարիների հիմնականում ավարտված պայմանագրերի համար ստացված ընդհանուր հավաստագրված վճարումներ:

Ֆինանսական ռեսուրսներ - Հայտատուն պետք է ցույց տա, որ իր համար հասանելի են կամ առկա են ֆինանսական ռեսուրսներ, ինչպիսիք են իրացվելի ակտիվներ, չգրավադրված իրական ակտիվներ, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ, տարբերվող ցանկացած պայմանագրային կանխավճարներից՝ բավարարելու հետևյալ դրամական հոսքերի հետևյալ պահանջներին՝

(i) 3,0 մլն ԱՄՆ դոլար որպես դրամական հոսքերի պահանջ

(ii) սույն պայմանագրի և իր ընթացիկ պարտավորությունների համար ընդհանուր դրամական միջոցների հոսքերի պահանջները:

5. **Մեկից ավել լոտերի շնորհման դեպքում՝**
   - Պահանջվող հատուկ փորձառությունը պետք է լինի առանձին լոտերի համար պահանջվող հատուկ փորձառությունների հանրագումարը:
   - Պահանջվող կանխիկ գումարների հոսքերը պետք է լինի առանձին լոտերի համար պահանջվող կանխիկ գումարների հոսքերի հանրագումարը:
   - Պահանջվող տարեկան շրջանառությունը պետք է լինի առանձին լոտերի համար պահանջվող տարեկան շրջանառություն հանրագումարը:

6. Հայտատուն պետք է կցի գրավոր հայտարարություն, որ չկա սահմանված կամ հայտարարված սնանկացման գործընթաց իր ընկերության ակտիվների դեմ և որ ընկերության լուծարման գործընթաց չի ընթանում:

7. Մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը կարող է ստացվել հետաքրքրված հայտատուների կողմից՝ «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի անունով գրավոր դիմում ներկայացնելուց և ստորև նշված հաշվեհամարներին 100 (մեկ հարյուր ԱՄՆ դոլար), իսկ ՀՀ ռեզիդենտների դեպքում համարժեք ՀՀ դամի չափով չվերադարձվող վճարի՝ կատարման դեպքում:

<u>Հաշիվներ վճարման համար</u>

Հայաստանի ոչ ռեզիդենտների համար (վճարում ԱՄՆ դոլարով):

Շահառու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Շահառուի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
SWITFT CODE: ASHBAM 22
Հաշվեհամար № 2470139122970020
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Գրիգոր Լուսավորիչ 13.

Միջնորդ բանկ՝ CITYBANK, NEW YORK, ԱՄՆ
Հաշվի համար N36209105
SWIFT CODE: CITIUS33

<u>Հայաստանի ռեզիդենտների համար (վճարում ՀՀ դրամով)՝</u>

Շահառու՝ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Շահառուի բանկը՝ «Արդշինբանկ» ՓԲԸ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հաշվեհամար՝ № 2470139122970010
SWITFT CODE: ASHBAM 22

8. Մրցութային փաստաթուղթը ուղարկվելու է էլեկտրոնային տարբերակով կամ ֆայլերի փոխանակման ծառայությունների հղումով: Մրցութային փաստաթուղթերի հիմնական մասը տրամադրվելու է PDF ձևաչափով, իսկ տեխնիկական աղյուսակները և գնային աղյուսակները, որոնք պետք է լրացվեն Հայտատուի կողմից՝ MS Word և Excel ձևաչափով:

9. Միջազգային մրցակցային մրցույթը կանցկացվի Համաշխարհային Բանկի մեկ փուլով ընթացող Մրցույթի գործընթացի համաձայն:

10. Նախամրցութային հանդիպումը տեղի կունենա «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ գրասենյակում 2021թ.-ի փոտրվարի 9-ին, տեղական ժամանակով ժամը 14^{00}-ին:

11. Հայտերի էլեկտրանային տարբերակները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեներով մինչև 2021թ.-ի մարտի 11-ը, տեղական ժամանակով ժամը 12^{00}-ն:

    subrec@hven.am, tigran.sahradyan@hven.am

    Վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը մերժվելու են:
    Հայտի ներկայացման բոլոր ցուցումները ներկայացված են մրցութային փաստաթղթում:

12. Հաշվի առնելով COVID-19 հետ կապված առկա իրավիճակը և համապատասխան ճանապարհորդական սահմանափակումները, նախամրցութային հանդիպումը և հայտերի բացման նիստը կիրակնացվի նաև առցանց:

13. Հայտը պետք է ուղեկցվի Հայտի ապահովման երաշխիքով ըստ հետևյալի՝

Լոտ 1. «Արարատ-2» 220/110/6 կՎ ենթակայանի վերակառուցում

Լոտ 1-ի Հայտի ապահովման երաշխիքի գումարը պետք է լինի երկու հարյուր քառասուն հազար ԱՄՆ դոլար (240 000 ԱՄՆ դոլար):

Լոտ 2. «Զովունի» 220/110/10 կՎ ենթակայանի վերակառուցում

Լոտ 2-ի Հայտի ապահովման երաշխիքի գումարը պետք է լինի մեկ հարյուր վաթսուն հազար ԱՄՆ դոլար (160 000 ԱՄՆ դոլար):

Երկու (2) լոթերին մասնակցելու դեպքում ընդհանուր չորս հարյուր հազար ԱՄՆ դոլար (400 000 ԱՄՆ դոլար) չափով մեկ բանկային երաշխիքի ներկայացումը ընդունելի է:

14. Հայտերը կբացվեն 2021թ.-ի մարտի 11-ը, տեղական ժամանակով ժամը 12^{15}-ն «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ գրասենյակում:

Առցանց տեսակապը կազմակերպելու է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից՝ MS Teams ծրագրի միջոցով: Հայտերի բացումից առաջ հղումը կտրամադրվի այն հայտատուներին, ովքեր հայտեր են ներկայացրել նախքան հայտի ներկայացման վերջնաժամկետը:

15. Վերը նշված գործընթացի վերաբերյալ ամբողջ հաղորդակցությունը պետք է փոխանցվի հետևյալ հասցեներին՝

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝ պրն. Հայկ Հարությունյան
Հայաստանի Հանրապետություն,

Երևան 0084
Զորավար Անդրանիկի փողոց 1
Հեռ.՝ +37460 38-00-01
E.mail: subrec@hven.am, tigran.sahradyan@hven.am, hven@hven.am,

16. Մրցույթի Հրավերը նաև հրատարակվելու է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ կայքում հետևյալ հասցեով՝ www.hven.am,

17. Մրցութային Փաստաթղթի հիմնական առանձնահատկությունները

- Հաջողակ Հայտատուն պարտավոր է գրանցվել Հայաստանի Հանրապետությունում որպես հարկ վճարող: Կապալառուն պետք է պատասխանատվություն կրի Պայմանագրից բխող իր հարկային և մաքսային պարտավորությունների հետ կապված գումարների հաշվարկման և վճարման համար, և Պատվիրատուն ոչ մի դեպքում չի գործելու որպես Կապալառուի հարկային գործակալ:
- Սույն Պայմանագիրը լինելու է «լիավարտ հիմունքներով» պայմանագիր, որի վճարումները կապված են լինելու շինարարության առաջընթացի հիմնական կետերի՝ «Օբյեկտների մաս»-ի մոնտաժման/ընդունման հետ, համաձայն Մրցութային Փաստաթղթերի Բաժին X.Պայմանագրի Ձևեր-ի Հավելված 1. Վճարման Պայմաններ և Ընթացակարգեր բաժնի:
- Գնային Աղյուսակ № 4 (Կառուց, մոնտաժում և այլ ծառայություններ) պետք է ներառի Հայտի տվյալների թերթիկում սահմանված վերջնական նշանակման վայր տեղական տրանսպորտային փոխադրման, ինչպես նաև սարքավորման մատակարարումից բխող ապահովագրական և այլ ծառայությունների, բոլոր աշխատանքների, Կապալառուի սարքավորումների, ժամանակավոր աշխատանքների, նյութերի, սպառվող ապրանքների և ցանկացած բնույթի բոլոր այլ պարագաների և այլնի, ներառյալ գործառույթների ու տեխնիկական սպասարկման ծառայությունների, շահագործման և տեխնիկական սպասարկման ձեռնարկների ապահովման, ուսուցման և այլնի հետ կապված չափման միավորները կամ գները, որտեղ Մրցութային փաստաթղթում սահմանված են որպես անհրաժեշտ պայման տեղակայման և այլ ծառայությունների պատշաճ կատարման համար, այդ թվում՝ բոլոր հարկերը, տուրքերը, հավաքագրումներն ու գանձումները, որոնք ենթակա են վճարման Պատվիրատուի երկրում Հայտերի ներկայացման վերջնաժամկետից քսանութ (28) օր առաջ:
- «Օբյեկտների մաս»ի սեփականությունը պետք է փոխանցվի Պատվիրատուին՝ «Շահագործման Ընդունման Նախնական Սերտիֆիկատ»-ը կամ «Աշխատանքների ավարտման նախնական Սերտիֆիկատ» թողարկման պահից:
- Կապալառուն պետք է սեփական ծախսերով տնօրինի բոլոր ներկրված նյութերը ներկրման կետ(եր)ում և պետք է իրականացնի մաքսազերծման համար անհրաժեշտ բոլոր ձևակերպումները (ներառյալ մաքսային բրոքերի վարձույթ և իր ծառայությունների համար համապատասխան վճարներ կատարելը և այլն): Մաքսազերծման հետ կապված բոլոր ծախսերը (հարկերը, տուրքերը, ցանկացած այլ վճարները) պետք է կրի Կապալառուն, և դա պետք է ներառված լինի միավոր գնի մեջ: